Հավելված N 12

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՈԼՈՐՏԸ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը պետական կառավարման համակարգի լիազոր մարմինն է, որը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության արտաքին քաղաքականությունը:

Հիմնական գործառույթներն են.

- միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերի և իրավունքների ներկայացումը,
- օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը,
- Հայաստանի Հանրապետության միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ դիվանագիտական կամ հյուպատոսական հարաբերությունների իրականացումը,
- համաշխարհային քաղաքական և տնտեսական իրադրության, օտարերկրյա պետությունների արտաքին ու ներքին քաղաքականության, միջազգային կազմակերպությունների գործունեության վերլուծության հիման վրա համապատասխան առաջարկների ներկայացումը,
- համաշխարհային և տարածաշրջանային հիմնախնդիրների լուծման գործում Հայաստանի Հանրապետության դերի բարձրացումը,
- Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգի ապահովումը,
- պետական մարմիններին իրենց գործունեության համար արտաքին քաղաքականության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովում և մասնագետների վերապատրաստումը:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ արտաքին քաղաքականությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և պետական շահերի պաշտպանությունն ու ամրապնդմանը, Հայաստանի շուրջ անվտանգային միջավայրի բարելավմանը, այլ պետությունների հետ երկկողմ հարաբերություններում փոխշահավետ համագործակցության խորացմանը՝ բալանսավորված ու բալանսավորման քաղաքականության մոտեցումների համատեքստում, միջազգային կազմակերպությունների օրակարգում ՀՀ առաջնահերթությունների ներառումը, առաջմղումը և հետագա սպասարկումը:

Հիմնական թիրախներն են՝ տարածաշրջանային խաղաղության և անվտանգության շարունակական ամրապնդումը, Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորումը և խաղաղության հետագա ինստիտուցիոնալացումը, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների ամբողջական կարգավորումը, տարածաշրջանային փոխկապակցվածության խորացումը, տնտեսական ենթակառուցվածքների ապաշրջափակումը և դրանց գործունեության ապահովումը, ժողովրդավարական արժեքների, օրենքի գերակայության և մարդու իրավունքների շարունակական ամրապնդումը, երկկողմ քաղաքական, տնտեսական և այլ ոլորտային համագործակցության ամրապնդումը, առևտրի ծավալների ավելացումը, ՀՀ տեխնոլոգիական զարգացումը, նորարարական և ռազմավարական գործընկերությունների հաստատումը, շարունակական զարգացումը, օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանությունը, միջազգային կազմակերպություններում դրական օրակարգի ձևավորումը և դրա շրջանակներում արտաքին քաղաքական, անվտանգային, մարդու իրավունքների, կայուն զարգացման, մշակութային և այլ ոլորտներին առնչվող ՀՀ շահերի առաջմղումը:

Տվյալ թիրախներն արտացոլում են «ՀՀ Կառավարության 2021-2026թթ. Գործունեության Միջոցառումների Ծրագրի» դրույթները:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ արտաքին գործերի նախարարության ոլորտային ծախսային ծրագրերն են.

Արտաքին գործերի ոլորտում կառավարության քաղաքականության մշակում և իրականացում

Ծրագրի շրջանակում ՀՀ արտաքին գործերի նախարարությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և պետական շահերի պաշտպանությունը, խաղաղության օրակարգի հետևողական կյանքի կոչումը:

Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպում և իրականացում

Ծրագրի շրջանակում ՀՀ արտաքին գործերի նախարարությունն իրականացնում է միջազգային գործընկերների հետ հարաբերությունների լավարկում և երկկողմ հարաբերությունների խորացում:

Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ

Ծրագրի շրջանակում ԱԳՆ իրականացնում է միջազգային կազմակերպություններում ներգրավման միջոցով ՀՀ առաջնահերթությունների սպասարկում:

Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում

Ծրագրի շրջանակում ՀՀ արտաքին գործերի նախարարությունն իրականացնում է պետական կառավարման համակարգում արտաքին հարաբերությունների իրականացման արդյունավետության բարձրացում:

Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում

Ծրագրի շրջանակում ԱԳՆ պետական արարողակարգի ծառայությունը իրականացնում է արարողակարգային միջոցառումների պատշաճ կազմակերպում:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ներկայացնում ենք ՀՀ արտաքին գործերի նախարարության յուրաքանչյուր տարվա համար նախատեսված գումարները.

2027 թվականի համար՝ 25,626,966.1 հազար դրամ
Ծրագիր 1061 – 3,744,211.5 հազար դրամ
Ծրագիր 1128 – 18,612,897.3 հազար դրամ
Ծրագիր 1118 – 2,541,826.7 հազար դրամ
Ծրագիր 1050 – 301,467.6 հազար դրամ
Ծրագիր 1178 – 426,563.0 հազար դրամ

2028 թվականի համար՝ 26,095,738.2 հազ. դրամ
Ծրագիր 1061 – 3,669,756.4 հազար դրամ
Ծրագիր 1128 – 19,149,822.1 հազար դրամ
Ծրագիր 1118 – 2,547,870.0 հազար դրամ
Ծրագիր 1050 – 301,467.6 հազար դրամ
Ծրագիր 1178 – 426,822.1 հազար դրամ

2029 թվականի համար՝ 24,285,541.4 հազար դրամ
Ծրագիր 1061 – 3,586,591.0 հազար դրամ
Ծրագիր 1128 – 17,417,897.6 հազար դրամ
Ծրագիր 1118 – 2,547,910.5 հազար դրամ
Ծրագիր 1050 – 301,467.4 հազար դրամ
Ծրագիր 1178 – 431,674.7 հազար դրամ: